

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2022-2023 ուստարի
/ տևողությունը – 90 րոպե/
11-12 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

- Հայկական լեռնաշխարհի նշված դաշտերից որի՞ նկատմամբ է արևի հորիզոնական դիրքը հունիսի 22-ին ավելի ցածր
1. Խարբերդի 2. Նախիջևանի 3. Մանազկերտի 4. Աշկալայի
- Նշված գետերից ո՞րն է առավել աղտոտված հանքարդյունաբերական հոսքաջրերով
1. Որոտան 2. Ողջի 3. Ախուրյան 4. Հրազդան
- Դեկտեմբերի 22-ի կեսօրին ճանապարհորդը գտնվում է Կիտո քաղաքում և ուղիղ քայլում է դեպի իր նպատակակետը: Քանի՞ աստիճան ազիմուտով է նա տեղաշարժվում եթե այդ պահին իր սովերը տեսնում է ուղիղ անկյան տակ՝ ձախ կողմից
1. 270° 2. 0° 3. 90° 4. 180°
- Մթնոլորտում ըստ բարձրության ջերմաստիճանի բարձրացում է նկատվում Երկրի մակերևույթից՝
1. 10-15կմ բարձրության վրա 2. 25-30կմ բարձրության վրա
3. 55-60կմ բարձրության վրա 4. 70-75կմ բարձրության վրա
- Նշված օվկիանոսներից ամենամեծ միջին աղիությունը բնորոշ է՝
1. Խաղաղ օվկիանոսին 2. Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսին
3. Ատլանտյան օվկիանոսին 4. Հնդկական օվկիանոսին
- Ո՞ր բնական զոնան են բնորոշում բոլոր նշված եզրույթները (տերմինները). մաքվիս, չապառալ, գարիգա
1. սավաննաներ և նոսրանտառներ
2. տունդրա և անտառատունդրա
3. տափաստաններ և անտառատափաստաններ
4. մերձարևադարձային մշտադալար կոշտատերև անտառներ և թփուտներ
- Տրանսպորտային ցանցի հովհարաձև կոնֆիգուրացիան բնորոշ է՝
1. Չիլիին 2. Հարավաֆրիկյան Հանրապետությանը
3. Գերմանիային 4. Ֆրանսիային
- Այն ձեռնարկությունը (կորպորացիան), որն ունի մասնաճյուղեր կամ դուստր ձեռնարկություններ մեկից ավելի երկրներում կոչվում է՝
1. վերազգային 2. ազգային 3. համաշխարհային 4. կոմբինատ
- Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ
1. Հյուսիսային կիսագնդում եգիպտացորենի գոտին տարածվում է ցորենի գոտուց հյուսիս
2. Հյուսիսային կիսագնդում գարու գոտին տարածվում է ցորենի գոտուց հյուսիս
3. Հյուսիսային կիսագնդում բրնձի գոտին տարածվում է ցորենի գոտուց հյուսիս
4. Հյուսիսային կիսագնդում բրնձի գոտին տարածվում է գարու գոտուց հյուսիս
- Համաձայն Թյունենի տեսության՝ նշված տնտեսություններից և գյուղատնտեսության ուղղություններից ո՞րն է տեղաբաշխվում բնակավայրերից առավել հեռու
1. կաթնամթերքի արտադրությունը 2. հացահատիկի արտադրությունը
3. բանջարեղենի արտադրությունը 4. մսատու անասնապահությունը


11. Մթնոլորտում ջերմոցային գազերից ամենամեծ տեսակարար կշիռն ունի

1. ջրային գոլորշին 2. ածխածնի երկօքսիդը 3. մեթանը 4. օզոնը

12. Գյուղատնտեսական և կոմունալ-կենցաղային չմաքրված հոսքաջրերի մուտքը ջրային մարմիններ առաջնահերթ հանգեցնում է վերջիններիս


1. աղակալման 2. թթվայնության բարձրացման
3. էվտրոֆացման 4. լուսաթափանցելիության աճի

13. Նշված տարբերակներից ո՞րն է իրականում գետի վտակ




1. Ա 2. Բ 3. Գ 4. Դ

14. Նշված քաղաքներից որո՞ւմ է առավել նպատակահարմար տեղաբաշխել այլումինաձուլական ձեռնարկություն



1. Քաղաք 1 2. Քաղաք 2 3. Քաղաք 3 4. Քաղաք 4

15. Նույն տեսակի ծառը տնկեցին 4 տարբեր վայրերում և բոլորը հատեցին նույն ժամանակահատվածն անց: Ելնելով ծառի կոճղի սխեմատիկ պատկերից՝ նշեք, թե այլ հավասար պայմանների դեպքում ո՞ր ծառի տնկման վայրում է ակտիվ ջերմաստիճանների գումարը եղել ամենափոքրը:



1. Ա 2. Բ 3. Գ 4. Դ

Վարձ պատասխանով առաջադրանքներ

16. Ա կետը միջօրեականի ուղղությամբ հաշված հյուսիսային արևադարձից հեռու է 1332կմ, իսկ հյուսիսային բևեռային շրջագծից՝ 6105կմ: Հյուսիսային կիսագնդի ո՞ր աշխարհագրական լայնության վրա է գտնվում Ա կետը:

17. Որքա՞ն է աշխարհագրական ազիմուտի մեծությունը, եթե հայտնի է, որ մագնիսական հակումն արևելյան է՝ 5°, իսկ մագնիսական ազիմուտը՝ 49°:

18. Դեսագուադերո գետը սկիզբ է առնում Տիտիկակա լճից՝ 3800մ բարձրությունից: Հոսքով մի քանի կիլոմետր վար այն գտնվում է ծովի մակարդակից 3600մ բարձրության վրա, իսկ գետի թեքությունը այդ հատվածում 4մ/կմ է: Որքա՞ն է կազմում Դեսագուադերոյի երկարությունը չափված հատվածում:

19. Ա երկրի տարածքը 90000կմ² է: Այդ երկրում ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը 200000կմ է, երկաթուղային ուղիներինը՝ 30000կմ, խողովակաշարերի ընդհանուր երկարությունը՝ 130000կմ, իսկ գետային նավարկելի հատվածների ընդհանուր երկարությունը՝ 1000կմ: Ելնելով բերված ցուցանիշներից՝ հաշվել ցամաքային տրանսպորտի ցանցի խտությունը:

20. Ա երկրի նավթի պաշարները 50մլն խմ են, իսկ տարեկան արդյունահանումը՝ 1մլն խմ: Որոշել Ա երկրի ապահովվածությունը նավթով: